# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 12-ին

# ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## Գ Լ ՈՒ Խ 1

## *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

### Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով սահմանվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց, հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողների վարձատրության սկզբունքները, կարգավորվում են նրանց հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի, պարգևատրման, դրամական օգնության կազմակերպման և վարձատրության հետ կապված այլ հարաբերություններ:

### Հոդված 2. Սույն օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է՝

1) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող հետևյալ անձանց վրա՝

ա. քաղաքական պաշտոն զբաղեցնող,

բ. հայեցողական պաշտոն զբաղեցնող,

գ. քաղաքացիական պաշտոն զբաղեցնող, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի անդամների,

դ. պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող՝ պետական ծառայող չհանդիսացող անձանց, որոնց վրա տարածվում են միայն սույն օրենքի 28-րդ հոդվածի դրույթները), այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, պետական պահպանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և

փրկարար ծառայության ծառայողների, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված շարքային (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր չկնքած զինծառայողները) կազմի և ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների.

2) հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող միջոցների հաշվին ծրագրեր իրականացնող գրասենյակների աշխատողներ, որոնց վրա տարածվում են միայն սույն օրենքի 30-րդ հոդվածի դրույթները:

2. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մարմինների աշխատակազմերում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Երևանի քաղաքապետարանի, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերի, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ընդ որում, սույն օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում և ժամանակահատվածում կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի կենտրոնական ապարատում տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը կրկնապատկվում են:

3. Հայաստանի Հանրապետության Նախագահի գլխավոր ռազմական տեսչության անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության հանրապետական գործադիր մարմնի համակարգում անձնակազմի պաշտոնային դրույքաչափերին սահմանում է Հայաստանի Հանրապետության Նախագահը, իսկ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմերում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը համապատասխանաբար սահմանում են Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի

ղեկավարը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարը:

4. Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմերում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ամսական աշխատավարձի ֆոնդը հաշվարկվում է բազային աշխատավարձի կրկնապատիկի և այդ աշխատողների թվի արտադրյալով:

5. Հանրաքվեի, տեղական հանրաքվեի, Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանու ընտրությունների, ինչպես նաև տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում գտնվող 5 և ավելի համայնքներում կամ 5-ից պակաս համայնքներում, որոնց ընտրողների ընդհանուր թիվը միասին գերազանցում է 10.000-ը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի ընտրություններ անցկացվելու դեպքում՝ ընտրությունների անցկացման ժամանակահատվածի համար, տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը, հանձնաժողովի քարտուղարը վարձատրվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնային դրույքաչափի, իսկ հանձնաժողովի անդամները՝ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի վարձատրության 70 տոկոսի չափով: Մյուս ընտրությունների դեպքում տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը, հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի անդամները վարձատրվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի վարձատրության չափով:

Սույն մասում նշված պաշտոնային դրույքաչափերի տարբերությունը նախատեսվում է ընտրությունների կամ հանրաքվեների կազմակերպման և անցկացման ծախսերում:

6. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն ընտրությունների ժամանակահատվածում, ինչպես նաև Ազգային ժողովի ընտրությունների երկրորդ փուլ անցկացվելու դեպքում վարձատրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի կրկնապատիկի, հանձնաժողովի քարտուղարը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի վարձատրության 70 տոկոսի, իսկ հանձնաժողովի անդամները՝ նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափով: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի նախագահի տեղակալը և հանձնաժողովի անդամները վարձատրվում են ընտրությունների արդյունքներն ամփոփելուց հետո:

7. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչված շարքային (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր

չկնքած զինծառայողները) զինծառայողներին տրվում է ամսական վարձատրություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով:

***(2-րդ հոդվածը փոփ. 11.06.14 ՀՕ-57-Ն, խմբ. 25.05.16 ՀՕ-63-Ն, փոփ. 31.05.17 ՀՕ-84-Ն, լրաց., փոփ. 06.12.17 ՀՕ-245-Ն)***

## Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **հիմնական աշխատավարձ** (այսուհետ նաև՝ պաշտոնային դրույքաչափ)՝ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված բազային աշխատավարձի և սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված գործակցի արտադրյալ.

2) **լրացուցիչ աշխատավարձ՝** աշխատավարձի փոփոխական մաս, որը հաշվարկվում է պաշտոնային դրույքաչափի նկատմամբ, և որի վճարումը պայմանավորված է սույն կետի «ա» և «բ» ենթակետերում թվարկված որևէ պայմանի և(կամ) պայմանների առկայությամբ և ներառում է՝

ա. **հավելում՝** սույն ենթակետում նշված պայմաններից որևէ մեկի կամ դրանցից մի քանիսի, այն է՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներ կատարելու, բարձրլեռնային վայրերում, արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատելու, զինվորական, քրեակատարողական և փրկարար ծառայության առանձնահատկություններով պայմանավորված՝ պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող տոկոսային ավելացում կամ պաշտոնային դրույքաչափին դրամական բացարձակ մեծությամբ սահմանվող ավելացում,

բ. **հավելավճար՝** սույն ենթակետում նշված պայմաններից որևէ մեկի կամ դրանցից մի քանիսի, այն է՝ դասային, դիվանագիտական աստիճանների, տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու, կոչումների, աշխատանքային և(կամ) ծառայության ստաժի, օտար լեզուների իմացության համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող տոկոսային ավելացում.

3) **պարգևատրում՝** միանվագ վճար, որը պետական պաշտոն զբաղեցնող անձին տրվում է ծառայողական գործունեության (կատարողականի) գնահատման և(կամ) հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքների կատարման համար.

4) **բազային աշխատավարձ՝** պետական պաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի որոշման համար հիմք հանդիսացող միավոր.

5) **գործակից՝** պետական պաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի չափը որոշելու համար բազային աշխատավարձն այդ թվով բազմապատկելու համար սահմանված մեծություն.

6) ***(կետն ուժը կորցրել է 06.12.17 ՀՕ-245-Ն)***

7) **դրամական օգնություն՝** սույն օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված վճար:

***(3-րդ հոդվածը փոփ., լրաց. 11.06.14 ՀՕ-57-Ն, փոփ. 06.12.17 ՀՕ-245-Ն)***

### Հոդված 4. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության հիմնական սկզբունքները

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության հիմնական սկզբունքներն են՝

1) պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության միասնական, արդարացի համակարգի և պետական պաշտոններ զբաղեցնող անձանց պարտականություններին, պատասխանատվությանը համապատասխանող հիմնական աշխատավարձի ապահովումը.

2) պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության չափերի հիմնավորված տարբերակման ապահովումը.

3) պետական ծառայության տարբեր ոլորտներում աշխատավարձերի սանդղակների համադրելիության ապահովումը.

4) հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հիմնավորված հարաբերակցությունների ապահովումը.

5) համարժեք աշխատանքի և փորձառության համար համարժեք վարձատրությունը.

6) ծառայության ընթացքում պետական ծառայողների ավելի բարձր պաշտոններ զբաղեցնելու ձգտման խթանումը.

7) ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից կախված՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության խտրականության բացառումը:

## Գ Լ Ո Ւ Խ 2

## *ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ*

### Հոդված 5. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձը

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:

2. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսից և գերազանցել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 120 տոկոսը:

3. Բազային աշխատավարձը տվյալ տարվա համար չի կարող սահմանվել նախորդ տարվա բազային աշխատավարձից ավելի ցածր:

4. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության չափերի փոփոխությունն իրականացվում է բազային աշխատավարձի և(կամ) գործակիցների փոփոխության միջոցով՝ ըստ մասնագիտությունների և տարածքների աշխատանքի շուկայի վերլուծության հիման վրա, որն իրականացվում է երեք տարին մեկ, և որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված վերլուծության արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է առանձին մասնագիտությունների համար հիմնական աշխատավարձի չափը սահմանել բազային աշխատավարձի ու գործակցի արտադրյալի և դրա առավելագույնը 10 տոկոսը չգերազանցող հանրագումարի չափով:

## Հոդված 6. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձի կառուցվածքը

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձը կազմված է սույն օրենքով սահմանված հիմնական աշխատավարձից, լրացուցիչ աշխատավարձից և պարգևատրումներից: Լրացուցիչ աշխատավարձը ներառում է հավելումները և հավելավճարները:

2. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ աշխատավարձը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի 30 տոկոսը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակումը կիրառելիս արտաժամյա և գիշերային աշխատանքների համար տրվող հավելումները հաշվարկվում են ֆինանսական տարվա կտրվածքով՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց տարեկան հիմնական աշխատավարձի նկատմամբ:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված լրացուցիչ աշխատավարձի հաշվարկում չեն ներառվում բարձրլեռնային վայրերում աշխատելու համար տրվող հավելումները:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումը չի տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, պետական պահպանության հանրապետական գործադիր

մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների նկատմամբ:

6. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց պարգևատրումը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված պարգևատրման ֆոնդից, աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից, տվյալ մարմնի նյութական խրախուսման և զարգացման ֆոնդի միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Տվյալ մարմնի նյութական խրախուսման և զարգացման ֆոնդի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից յուրաքանչյուրից պարգևատրմանն ուղղվող միջոցները չեն կարող գերազանցել տվյալ մարմնի աշխատավարձի տարեկան ֆոնդի 30 տոկոսը:

***(6-րդ հոդվածը փոփ. 11.06.14 ՀՕ-57-Ն)***

## Հոդված 7. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց հավելավճարները և դրանց հաշվարկման կարգը

1. Դասային, դիվանագիտական աստիճանների, կոչման (այդ թվում՝ դասային և հատուկ), ինչպես նաև սույն օրենքով սահմանված դեպքերում օտար լեզուների իմացության, աշխատանքային և(կամ) ծառայության ստաժի համար պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրվում են հավելավճարներ:

2. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց շնորհված դասային, դիվանագիտական աստիճանների և կոչման համար հավելավճարները սահմանվում են պաշտոնային դրույքաչափի նկատմամբ:

3. Տվյալ մարմնում ամենացածր դասային կամ դիվանագիտական աստիճանի համար հավելավճարը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի 3 տոկոսի չափով, իսկ դրան հաջորդող յուրաքանչյուր հերթական ավելի բարձր դասային կամ դիվանագիտական աստիճանի համար հավելավճարի չափը աճում է մեկ տոկոսով, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի:

3.1. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պետական ծառայողներին դասային աստիճանի համար հավելավճար է տրվում սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

4. Կոչման համար հավելավճարը տրվում է հարկադիր կատարողներին, հարկային, մաքսային, հատուկ քննչական ծառայության ծառայողներին, քննչական կոմիտեի ծառայողներին, ընդ որում, հարկային և մաքսային ծառայողներին հավելավճարը տրվում է միայն առավել բարձր հավելավճար նախատեսող կոչման համար, իսկ նույն չափով հավելավճար նախատեսող կոչումների համար հավելավճարը տրվում է այդ կոչումներից միայն մեկի համար: Տվյալ մարմնում ամենացածր կոչման համար հավելավճարը սահմանվում է պաշտոնային

դրույքաչափի 3 տոկոսի չափով, իսկ դրան հաջորդող յուրաքանչյուր հերթական ավելի բարձր կոչման համար հավելավճարի չափը աճում է մեկ տոկոսով:

5. Քաղաքացիական ծառայողին, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայողին, քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողին, դատախազության աշխատակազմում պետական ծառայողին, դատական ծառայողին (այդ թվում՝ Սահմանադրական դատարանի աշխատակազմում դատական ծառայողին) հավելավճար է տրվում միայն յուրաքանչյուր ծառայությունում տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու դեպքում՝ նրա պաշտոնային դրույքաչափի 5 տոկոսի չափով, ընդ որում, քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին սույն մասով նախատեսված հավելավճարը տրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին դասի պետական խորհրդականի դասային աստիճան ունենալու դեպքում:

6. Դասային, դիվանագիտական աստիճանների կամ կոչման համար հավելավճարները տրվում են բացառապես տվյալ մարմնում (ծառայությունում) աշխատելու ժամանակահատվածում:

7. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վճարվող հավելավճարների ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

***(7-րդ հոդվածը խմբ. 11.06.14 ՀՕ-57-Ն, լրաց., փոփ. 16.12.16 ՀՕ-6-Ն, լրաց. 06.12.17 ՀՕ-245-Ն)***

## Հոդված 8. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրվող հավելումները և դրանց չափը

1. Բարձրլեռնային վայրերում, ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներ կատարելու դեպքերում պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրվում է հավելում, որի չափը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատելու համար պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրվում է հավելում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն չափերով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 3.1-ին մասերով նախատեսված դեպքերի:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, պետական պահպանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն

զբաղեցնողներին, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում, եթե դրանք չեն կարգավորվում սույն օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով:

3.1. Դատախազին, հատուկ քննչական ծառայության և քննչական կոմիտեի ծառայողներին արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում:

4. ***(մասն ուժը կորցրել է 19.10.16 ՀՕ-168-Ն)***

5. Բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, պետական պահպանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների, պետական պաշտոն զբաղեցնող անձանց վճարվող հավելումների ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը՝ հաշվի առնելով սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված առանձնահատկությունները:

***(8-րդ հոդվածը փոփ., լրաց. 11.06.14 ՀՕ-57-Ն, փոփ. 19.10.16 ՀՕ-168-Ն)***

## Գ Լ Ո Ւ Խ 3

## *ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ*

### Հոդված 9. Բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրությունը

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի հավելված 1-ով:

### Հոդված 10. Բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող հայեցողական և քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրությունը

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող հայեցողական, քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի հավելված 2-ով:

**Հոդված 11. Ազգային ժողովի պատգամավորի փոխհատուցման վճարները**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերը յուրաքանչյուր պատգամավորի համար սահմանել ամսական 50000 դրամի չափով, որոնց բաշխման կարգը սահմանվում է օրենքով:

**Հոդված 12. Սահմանադրական դատարանի նախագահի և անդամների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ սահմանվող հավելավճարները**

1. Սահմանադրական դատարանի նախագահին և անդամներին դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի համար վճարվում է հավելավճար՝ յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով:
2. Սահմանադրական դատարանի նախագահին և անդամներին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:
***(12-րդ հոդվածը 17.01.18*** *Error! Hyperlink reference not valid.* ***օրենքի 1-ին հոդվածի փոփոխություններով ուժի մեջ կմտնի նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:)***

**Հոդված 13. Դատավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարները**

1. Դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի համար դատավորին վճարվում է հավելավճար՝ յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով:
2. ***(մասն ուժը կորցրել է 29.06.16 ՀՕ-133-Ն)***
3. Դատավորներին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:
4. Դատարանում դատավորների թվի կրճատման կամ օրենքով նախատեսված՝ դատարանի կամ վճռաբեկ դատարանի պալատի վերացման դեպքում դատավորին ստորադաս դատարանի դատավորի պաշտոնում նշանակելիս նրա նախկին պաշտոնում ստացած աշխատավարձը, այդ թվում՝ հավելավճարները, բացառությամբ սույն օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքի,

պահպանվում են մինչև օրենքով սահմանված կարգով տվյալ պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի չափի հավասարվելը նրա նախկին պաշտոնում ստացած աշխատավարձի չափին:

***(13-րդ հոդվածը փոփ. 29.06.16 ՀՕ-133-Ն)***

**Հոդված 14. Դատախազի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարները**

1. Դատախազին վճարվում է հավելավճար դատախազի, դատախազության քննիչի, քննիչի, հատուկ քննչական ծառայության կամ քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով:

2. Դատախազը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար:

3. Դատախազներին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

***(14-րդ հոդվածը խմբ. 11.06.14 ՀՕ-57-Ն)***

## Գ Լ ՈՒ Խ 4

## *ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂՆԵՐԻ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ*

***(վերնագիրը լրաց. 11.06.14 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 15. Հատուկ քննչական ծառայության ծառայողի վարձատրությունը**

1. Հատուկ քննչական ծառայության պետի և նրա տեղակալի պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի հավելված 1-ով, իսկ հատուկ քննչական ծառայության այլ ծառայողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները՝ սույն օրենքի հավելված 2-ով:

2. Հատուկ քննչական ծառայության ծառայողին վճարվում է հավելավճար՝ հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի, դատախազության քննիչի, քննչական կոմիտեի ծառայողի կամ քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով:

3. Հատուկ քննչական ծառայության ծառայողը կոչման համար ստանում է հավելավճար:

4. Հատուկ քննչական ծառայության ծառայողին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

5. Սույն օրենքի 18-20-րդ հոդվածներով, 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթները չեն տարածվում հատուկ քննչական ծառայության ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունների վրա:

***(15-րդ հոդվածը լրաց., փոփ. 11.06.14 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 15.1. Քննչական կոմիտեի ծառայողի վարձատրությունը**

1. Քննչական կոմիտեի նախագահի և նրա տեղակալների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի հավելված 1-ով, իսկ քննչական կոմիտեի այլ ծառայողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները՝ սույն օրենքի հավելված 2-ով:

2. Քննչական կոմիտեի ծառայողին վճարվում է հավելավճար՝ քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի, դատախազության քննիչի կամ քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով:

3. Քննչական կոմիտեի ծառայողը կոչման համար ստանում է հավելավճար:

4. Քննչական կոմիտեի ծառայողին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

5. Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ծառայողներին, ծառայության առանձնահատկություններով պայմանավորված, տրվում են հավելումներ, որոնց վճարման դեպքերը, չափերը և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Սույն օրենքի 18-20-րդ հոդվածներով, 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթները չեն տարածվում քննչական կոմիտեի ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունների վրա:

***(15.1-ին հոդվածը լրաց. 11.06.14 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 16. Զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների վարձատրությունը (դրամական ապահովությունը)**

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, պետական պահպանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն

զբաղեցնողների (այսուհետ նաև՝ զինծառայող), քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափը որոշվում է բազային աշխատավարձի և սույն հոդվածի 2-րդ մասում նշված համապատասխան հավելվածներով սահմանված՝ նրանց պաշտոնի խմբի (ենթախմբի) սանդղակում՝ համապատասխանաբար զինվորական, փրկարար կամ քրեակատարողական ծառայության ստաժին համապատասխանող գործակցի արտադրյալով:

2. Պաշտպանության հանրապետական գործադիր մարմնի համակարգում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են հավելված 3-ով, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմնի համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներինը՝ հավելված 4-ով, ոստիկանության հանրապետական գործադիր մարմնի համակարգում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներինը՝ հավելված 5-ով, վարչապետին ենթակա Հայաստանի Հանրապետության ~~Ազգային անվտանգության ծառայության~~ պետական պահպանության ծառայության զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներինը՝ հավելված 6-ով, քրեակատարողական ծառայողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են հավելված 7-ով, փրկարար ծառայության ծառայողներինը՝ հավելված 8-ով:

~~2.1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում սույն հոդվածի 2-րդ մասում նշված համապատասխան հավելվածներով նախատեսված պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոնների անվանացանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությամբ: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում հիմնական պաշտոններին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության հանրապետական գործադիր մարմնի համակարգում բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական հիմնական պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությամբ: Հայաստանի Հանրապետության պաշտպանության հանրապետական գործադիր մարմնի համակարգում մյուս հիմնական պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը: Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական և փրկարար~~

~~ծառայությունների հիմնական պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությամբ:~~

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի, 19-րդ հոդվածի 1.1-ին, 2-րդ, 3-րդ, 3.1-ին, 3.2-րդ, 4-րդ մասերով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 22-րդ հոդվածի 1-8-րդ մասերով, 25-րդ հոդվածով սահմանված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, պետական պահպանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունների վրա: Սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների վրա:

4. Զինծառայողներին, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին կոչման համար հավելավճար չի տրվում:

5. Զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում, ոստիկանությունում,պետական պահպանության, քրեակատարողական և փրկարար ծառայություններում, ծառայության առանձնահատկություններով պայմանավորված, տրվում են հավելումներ, որոնց վճարման դեպքերը, չափերը և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, պետական պահպանության հանրապետական գործադիր մարմինների, քրեակատարողական և փրկարար ծառայությունների կադրերի ռեզերվում (կադրերի տրամադրության տակ) գտնվելու դեպքում վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով:

***(16-րդ հոդվածը խմբ., լրաց., փոփ. 11.06.14 ՀՕ-57-Ն, փոփ. 06.12.17 ՀՕ-245-Ն)***

## Գ Լ ՈՒ Խ 5

## *ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ*

### Հոդված 17. Դիվանագետի վարձատրությունը

***(վերնագիրը փոփ. 11.06.14 ՀՕ-57-Ն, 06.12.17 ՀՕ-245-Ն)***

1. Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական այլ մարմին գործուղվելու դեպքում դիվանագետի վարձատրությունն իրականացվում է սույն օրենքի 6-րդ գլխով սահմանված դրույթներին համապատասխան, բացառությամբ ռոտացիայի հիման վրա օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության մարմինների դիվանագիտական ծառայության հավասարազոր պաշտոններում դիվանագետի տեղափոխման դեպքի, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող կամ հայեցողական պաշտոն զբաղեցնող այն դիվանագետների, որոնց հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցները սահմանված են սույն օրենքի հավելված 1-ով կամ հավելված 2-ով: Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական այլ մարմին գործուղվելու դեպքում դիվանագետի պաշտոնային դրույքաչափը և օտարերկրյա պետությունում ծառայողական գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցման չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Դիվանագետները հավելավճար են ստանում դիվանագիտական աստիճանի և օտար լեզվի իմացության համար: Օտար լեզվի իմացության համար հավելավճարի չափը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Դիվանագետին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

***(17-րդ հոդվածը փոփ., խմբ. 11.06.14 ՀՕ-57-Ն, փոփ., լրաց. 06.12.17 ՀՕ-245-Ն)***

## Գ Լ ՈՒ Խ 6

## *ՊԵՏԱԿԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ*

### Հոդված 18. Պետական ծառայողների հիմնական աշխատավարձի հաշվարկը

1. Պետական ծառայողի հիմնական աշխատավարձի չափը որոշվում է բազային աշխատավարձի և սույն օրենքի հավելված 9-ով սահմանված՝ նրա պաշտոնի ենթախմբի սանդղակում ստաժին համապատասխանող գործակցի արտադրյալով, իսկ բարձրաստիճան պաշտոնատար անձի դեպքում, որի հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցը սահմանվում է սույն օրենքի հավելված 1-

ով, հիմնական աշխատավարձի չափը որոշվում է բազային աշխատավարձի և սույն օրենքի հավելված 1-ով սահմանված համապատասխան գործակցի արտադրյալով:

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետական ծառայողի հիմնական աշխատավարձի չափը որոշվում է սույն օրենքի 9-րդ հավելվածով՝ տվյալ ծառայողի համար սահմանված համապատասխան գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալով: Ընդ որում, այդ ծառայողների նկատմամբ չեն տարածվում սույն օրենքի 19-րդ, 20-րդ հոդվածներով և 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթները, սակայն այդ ծառայողները հավելավճար են ստանում համապատասխան վարչությունում ծառայության յուրաքանչյուր տարվա համար՝ 2 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

2. Պետական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր ենթախմբի համար նախատեսված է հիմնական աշխատավարձի՝ նվազագույն պաշտոնային դրույքաչափից մինչև առավելագույնը հաշվարկելու սանդղակների աղյուսակ, որը ներառում է պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները:

3. Յուրաքանչյուր սանդղակ բաղկացած է աշխատավարձի մակարդակներից, որոնցից յուրաքանչյուրում հիմնական աշխատավարձի հաշվարկման համար սահմանվում է բազային աշխատավարձի նկատմամբ բազմապատիկ գործակից:

***(18-րդ հոդվածը լրաց. 11.06.14 ՀՕ-57-Ն, 01.12.14 ՀՕ-204-Ն, փոփ. 19.10.16 ՀՕ-168-Ն, 06.12.17 ՀՕ-245-Ն)***

## Հոդված 19. Պետական ծառայողի հիմնական աշխատավարձը պաշտոնում նշանակվելիս

1. Առաջին անգամ պետական ծառայության պաշտոնում նշանակված անձը վարձատրվում է տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող սանդղակի առաջին մակարդակի հիմնական աշխատավարձի չափով (պաշտոնային դրույքաչափով):

1.1. Մրցույթի արդյունքով, ինչպես նաև արտամրցութային կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ կարգով պետական ծառայության հավասար պաշտոնում նշանակված պետական ծառայողը աշխատավարձի համապատասխան սանդղակում վարձատրվում է իր նախորդ պաշտոնային դրույքաչափը որոշող գործակցով:

2. Մրցույթի արդյունքով, ինչպես նաև արտամրցութային կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ կարգով պետական ծառայության ավելի բարձր պաշտոնի նշանակված պետական ծառայողը նոր ենթախմբի սանդղակում իր նախորդ պաշտոնային դրույքաչափը որոշող գործակցին հավասար (0.01 միավորի տարբերությամբ) գործակցի առկայության

դեպքում վարձատրվում է վերջինիս նկատմամբ երկու մակարդակ բարձր գործակցով, հակառակ դեպքում՝ նոր ենթախմբի սանդղակի նվազագույն գործակցով:

3. Մրցույթի արդյունքով, ինչպես նաև արտամրցութային կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ կարգով պետական ծառայության ավելի ցածր պաշտոնի նշանակված պետական ծառայողը աշխատավարձի համապատասխան սանդղակում վարձատրվում է իր նախորդ պաշտոնային դրույքաչափը որոշող գործակցին հավասար (0.01 միավորի տարբերությամբ) կամ առավել մոտ գործակցով:

3.1. Սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին, 2-րդ կամ 3-րդ մասերով սահմանված դրույթները կիրառելու նպատակով պետական ծառայության առանձին տեսակների համար հավասար, բարձր կամ ցածր պաշտոնները որոշվում են սույն օրենքի 9-րդ հավելվածով հաստատված սանդղակների աղյուսակում տվյալ պաշտոնի զբաղեցրած դիրքով, բացառությամբ սույն հոդվածի 3.2-րդ մասով նախատեսված դեպքի: Եթե համապատասխան պաշտոնների համար հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցները տվյալ սանդղակի 1-11-րդ մակարդակներում նույնն են, ապա պաշտոնները համարվում են հավասար: Ցածր են համարվում այն պաշտոնները, որոնց հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցները համապատասխան սանդղակի 1-11-րդ մակարդակներում ցածր են զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված գործակիցներից: Բարձր են համարվում այն պաշտոնները, որոնց հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցները համապատասխան սանդղակի 1-11-րդ մակարդակներում բարձր են զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված գործակիցներից:

3.2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության ծառայողների համար սույն օրենքի 19-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված հավասար, բարձր կամ ցածր պաշտոնները որոշվում են՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տվյալ պետական ծառայության պաշտոնների անվանացանկում այդ պաշտոնի խումբը (ենթախումբը):

4. Վերակազմակերպման պահին վերակազմակերպվող մարմնի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող պետական ծառայող չհանդիսացող աշխատողներին պետական ծառայության պաշտոններում նշանակելիս պահպանվում է նրանց նախկին պաշտոնային դրույքաչափը, եթե պետական ծառայության պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը ցածր է նախկին պաշտոնային դրույքաչափից: Սույն մասով սահմանված դեպքում հիմնական աշխատավարձի բնականոն աճը հաշվարկվում է սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. ***(մասն ուժը կորցրել է 06.12.17 ՀՕ-245-Ն)***

6.***(մասն ուժը կորցրել է 06.12.17 ՀՕ-245-Ն)***

7. Համապատասխան մարմնի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության արդյունքում զինվորական, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության պաշտոնը քաղաքացիական հատուկ ծառայության կամ քաղաքացիական ծառայության պաշտոնի փոխվելու պարագայում տվյալ պաշտոնը զբաղեցնողին արտամրցութային կարգով քաղաքացիական հատուկ ծառայության կամ քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու դեպքում պահպանվում է զինվորական, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության վերջին պաշտոնում համապատասխան ծառայողի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի (դրամական ապահովության) և լրավճարի չափը, եթե նոր պաշտոնի համար օրենքով սահմանված կարգով որոշվող պաշտոնային դրույքաչափը ցածր է: Տվյալ պետական ծառայողի հիմնական աշխատավարձի չափը որոշվում է բազային աշխատավարձի և սույն օրենքի 9-րդ հավելվածով սահմանված՝ այդ պաշտոնի ենթախմբի սանդղակում նրա զինվորական, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության ստաժին համապատասխանող մակարդակի գործակցի արտադրյալով: Սույն մասով սահմանված վարձատրության պահպանվող չափի և սույն օրենքով սահմանված կարգով որոշվող հիմնական աշխատավարձի չափի միջև տարբերությունը հաշվարկվում է մինչև այն պահը, երբ տվյալ պետական ծառայողի՝ սույն օրենքով սահմանված կարգով որոշվող հիմնական աշխատավարձի չափը կգերազանցի վարձատրության պահպանված չափը, որն այդ պահին համարվում է նրա հիմնական աշխատավարձը:

8. Զինվորական, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության պաշտոնից ազատվելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական այլ ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում պետական ծառայողի հիմնական աշխատավարձի չափը որոշվում է բազային աշխատավարձի և սույն օրենքի 9-րդ հավելվածով սահմանված՝ նրա պաշտոնի ենթախմբի սանդղակում նրա զինվորական, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության ստաժին համապատասխանող մակարդակի գործակցի արտադրյալով, եթե առկա է սույն օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմանը:

9. Համապատասխան մարմնի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության դեպքում պետական ծառայողին զինվորական ծառայության, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության պաշտոնում նշանակելու դեպքում հիմնական աշխատավարձը որոշելու համար հաշվի է առնվում միայն զինվորական, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության ստաժը՝ առկայության դեպքում:

***(19-րդ հոդվածը խմբ. 11.06.14 ՀՕ-57-Ն, լրաց., փոփ. 06.12.17 ՀՕ-245-Ն)***

## Հոդված 20. Հիմնական աշխատավարձի բնականոն աճը

1. Պետական ծառայության հավասար պաշտոնում պետական ծառայողի անընդմեջ աշխատանքի համար սահմանվում է հիմնական աշխատավարձի՝ պաշտոնային դրույքաչափի բնականոն աճ՝ աշխատավարձի համապատասխան սանդղակի պաշտոնային դրույքաչափի նվազագույն մեծությունից առավելագույնը, եթե պետական ծառայողի հավասար պաշտոնում աշխատանքի ընդմիջումը չի գերազանցում վեց ամիսը:

Սույն մասով սահմանված բնականոն աճը չի տարածվում այն բարձրաստիճան պաշտոնատար անձի վրա, որի հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցը սահմանված է սույն օրենքի հավելված 1-ով:

1.1. Դիվանագետի բնականոն աճի համար հաշվարկվում է նաև ռոտացիայի հիման վրա օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության մարմինների դիվանագիտական ծառայության պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը:

2. Պետական ծառայության ստաժի վեց ամսից ավելի ընդմիջման դեպքում պետական ծառայողի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

3. Պետական ծառայողի համար պաշտոնային դրույքաչափը հաշվարկելիս 19-րդ հոդվածի 1.1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դրույթները գործում են, եթե պետական ծառայության ստաժի ընդմիջումը չի գերազանցում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը, կամ եթե պետական ծառայողը պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, զբաղեցրել է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հանրային ծառայության պաշտոն (պաշտոններ): Հանրային ծառայության պաշտոն (պաշտոններ) զբաղեցնելու ժամանակահատվածը հիմնական աշխատավարձի բնականոն աճի մեջ չի հաշվարկվում:

4. Հիմնական աշխատավարձի բնականոն աճը յուրաքանչյուր սանդղակի ներսում իրականացվում է աղյուսակի համաձայն՝ հետևյալ սխեմայով.

1) հիմնական աշխատավարձի 1-4-րդ մակարդակների համար սահմանվում է մեկ մակարդակի ավելացում՝ տարին մեկ անգամ.

2) հիմնական աշխատավարձի 5-7-րդ մակարդակների համար սահմանվում է մեկ մակարդակի ավելացում՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ.

3) հիմնական աշխատավարձի 8-10-րդ մակարդակների համար սահմանվում է մեկ մակարդակի ավելացում՝ յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ.

4) հիմնական աշխատավարձի 11-րդ մակարդակից աշխատավարձը մնում է անփոփոխ:

5. Տվյալ պաշտոնում պետական ծառայողի հիմնական աշխատավարձի բնականոն աճը կիրառվում է պետական ծառայողի հիմնական աշխատավարձի գործող մակարդակի նկատմամբ: Պետական ծառայողների հիմնական աշխատավարձի հերթական մակարդակի ավելացման ժամանակ հաշվի են առնվում նաև նրանց ծառայողական գործունեության գնահատման արդյունքները:

6. Պետական ծառայողի հիմնական աշխատավարձի հերթական մակարդակի ավելացումը, բացառությամբ սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, իրականացվում է աշխատանքային տարին լրանալուն հաջորդող ամսվա 1-ից՝ սույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան:

***(20-րդ հոդվածը լրաց. 11.06.14 ՀՕ-57-Ն, փոփ., խմբ. 06.12.17 ՀՕ-245-Ն)***

## Հոդված 21. Պետական ծառայողի հիմնական աշխատավարձի աճի կասեցումը և հիմնական աշխատավարձի իջեցումը

1. Պետական ծառայության պաշտոն զբաղեցնող պետական ծառայողի հիմնական աշխատավարձի բնականոն հերթական մակարդակի ավելացումը նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (մարմինը) կասեցնում է մեկ տարով, եթե՝

1) նախորդ տարվա ընթացքում ներկայացրած հաշվետվություններից մեկի եզրակացությունը բացասական է, կամ

2) նախորդ տարվա երկու կիսամյակների կատարողականների գնահատման արդյունքներից մեկը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կատարողականների գնահատման ցուցանիշից:

2. Պետական ծառայության պաշտոն զբաղեցնող պետական ծառայողի հիմնական աշխատավարձը նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իջեցնում է մեկ մակարդակով, եթե՝

1) նախորդ տարվա ընթացքում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող պետական ծառայողի ներկայացրած երկու կիսամյակային հաշվետվություններն էլ գնահատվել են բացասական եզրակացությամբ, և եթե չի կիրառվում կարգապահական տույժի առավել խիստ միջոց, կամ

2) նախորդ տարվա երկու կիսամյակների կատարողականների գնահատման արդյունքները ցածր են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կատարողականների գնահատման ցուցանիշից, և եթե չի կիրառվում կարգապահական տույժի առավել խիստ միջոց:

3. Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում պետական ծառայողի պաշտոնի իջեցումը որպես կարգապահական տույժ կիրառելու դեպքերում պետական ծառայողի հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցը նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իջեցնում է մեկ մակարդակով, եթե աշխատավարձի

համապատասխան սանդղակում առկա է իր նախորդ պաշտոնային դրույքաչափը որոշող գործակցին հավասար (0.01 միավորի տարբերությամբ) գործակից, հակառակ դեպքում պետական ծառայողը վարձատրվում է տվյալ սանդղակի ամենաբարձր գործակցով:

***(21-րդ հոդվածը փոփ., խմբ. 06.12.17 ՀՕ-245-Ն)***

## Հոդված 22. Պետական ծառայողների պարգևատրման աղբյուրները, չափերը և կարգը

1. Պետական ծառայության մարմինների համար պետական ծառայողների պարգևատրման ֆոնդը հաշվարկվում է միասնական տոկոսային դրույքաչափով:

2. Յուրաքանչյուր մարմնի համար պետական ծառայողների պարգևատրման ֆոնդը հաշվարկվում է այդ մարմնի պետական ծառայողների՝ պետական բյուջեով նախատեսված աշխատավարձի տարեկան ֆոնդի նկատմամբ միասնական տոկոսային արտահայտությամբ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի), որը սահմանվում է հաջորդ տարվա պետական բյուջեի մասին օրենքի առանձին հոդվածով:

3. Յուրաքանչյուր մարմնի համար պարգևատրման ֆոնդը կազմում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով տվյալ մարմնի համար նախատեսված աշխատավարձի տարեկան ֆոնդի առնվազն 10 տոկոսը:

4. Պետական ծառայողի պարգևատրման չափը հաշվարկվում է նրա հիմնական աշխատավարձի նկատմամբ:

5. Տվյալ մարմնում կիսամյակային հաշվետվությունների հիման վրա պետական ծառայողների պարգևատրման ֆոնդից պետական ծառայողի պարգևատրման չափը հաստատում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող անձը՝ հիմք ընդունելով պետական ծառայողի անմիջական ղեկավարի տված ծառայողական գործունեության գնահատման եզրակացությունը:

6. Պետական ծառայողը պարգևատրվում է, եթե նրա կատարողականի կիսամյակային գնահատականը կամ կիսամյակային հաշվետվության վերաբերյալ պետական ծառայողի ղեկավարի տված եզրակացությունը դրական է, և նա այդ կիսամյակում աշխատել է վեց ամիս, ներառյալ՝ ամենամյա կամ չվճարվող արձակուրդի, հղիության և ծննդաբերության արձակուրդի, ժամանակավոր անաշխատունակության, վերապատրաստման, գործուղման ժամանակահատվածները, բացառությամբ աշխատողի նախաձեռնությամբ վերապատրաստման գործուղվելու այն ժամանակահատվածի, որի ընթացքում գործատուի հայեցողությամբ վարձատրություն չի նախատեսվում: Ընդ որում, սույն մասով նախատեսված ժամանակահատվածում ներառվում են նաև պետական

ծառայողի ծառայողական քննության և (կամ) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման ժամանակահատվածները, եթե ծառայողը այդ հիմքով չի ազատվում պաշտոնից:

6.1. Մեկ կիսամյակի ընթացքում առանց աշխատանքի ընդհատման պետական մի մարմնից պետական մեկ այլ մարմին տեղափոխման դեպքում պետական ծառայողը չի զրկվում պարգևատրման իրավունքից, եթե նրա կիսամյակային հաշվետվությունները կամ կիսամյակային կատարողականները գնահատվել են դրական: Այդ դեպքում պետական ծառայողը պարգևատրվում է այն մարմնից, որտեղ տվյալ կիսամյակի աշխատած օրերն ավելի շատ են, իսկ հավասար լինելու պարագայում՝ այն մարմնից, որտեղ այդ պահի դրությամբ աշխատում է:

6.2. Պետական ծառայողը չի պարգևատրվում, եթե կիսամյակային հաշվետվությունը կամ կիսամյակային կատարողականը գնահատվել է բացասական:

6.3. Պետական ծառայողը պաշտոնից ազատման դեպքում պարգևատրվում է, եթե առկա է սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված պայմանը, և պարգևատրման պահին գտնվում է կադրերի ռեզերվում (բացառությամբ քաղաքացիական ծառայության կադրերի երկարաժամկետ ռեզերվի) կամ տվյալ մարմնում զբաղեցնում է այլ պաշտոն:

7. Կիսամյակային հաշվետվության հիման վրա պարգևատրումը պետական ծառայողների պարգևատրման ֆոնդից առաջին կիսամյակի համար տրվում է մինչև հուլիսի 30-ը, իսկ երկրորդ կիսամյակի համար՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 15-ը:

8. Պետական ծառայողի կատարողականի գնահատման և դրա հիման վրա պարգևատրման հաշվարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9. Պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պետական ծառայողներին կարող է պարգևատրել աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից և (կամ) տվյալ մարմնի նյութական խրախուսման և զարգացման ֆոնդի միջոցներից և (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

10. Աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ անմիջական ղեկավարի առաջարկությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ տարեկան ոչ ավելի, քան 3 անգամ:

*(22-րդ հոդվածը լրաց. 11.06.14 ՀՕ-57-Ն, լրաց., փոփ. 01.12.14 ՀՕ-204-Ն, լրաց. 25.10.17 ՀՕ-166-Ն, խմբ., լրաց. 06.12.17 ՀՕ-245-Ն)*

## Գ Լ Ո Ւ Խ 7

## *ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՅԼ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ*

### Հոդված 23. Զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներին, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին տրվող դրամական օգնությունը

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, պետական պահպանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներին, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին տրվող դրամական օգնության և սոցիալական այլ երաշխիքների տրամադրման հետ կապված և սույն օրենքով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են զինծառայողների սոցիալական ապահովության հարաբերությունները կարգավորող օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

### Հոդված 24. Պետական ծառայողներին (բացառությամբ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների) տրվող դրամական օգնության դեպքերը և պայմանները

1. Պետական ծառայողին (բացառությամբ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների) կարող է տրվել միանվագ դրամական օգնություն հետևյալ դեպքերում.

1) պետական ծառայողի ամուսնության.

2) տարերային աղետի հետևանքով պետական ծառայողին վնաս պատճառելու.

3) պետական ծառայողի կամ նրա ընտանիքի անդամի երկարատև հիվանդության.

4) պետական ծառայողի ընտանիքի անդամի մահվան:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում միանվագ դրամական օգնությունը պետական ծառայողին կարող է տրվել պետական ծառայողի մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

3. Պետական ծառայողի մահվան դեպքում նրա ընտանիքի անդամին կարող է վճարվել միանվագ դրամական օգնություն՝ պետական ծառայողի վերջին պաշտոնի համար սահմանված մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

4. Դրամական օգնությունը կարող է տրվել պետական ծառայողի (նրա մահվան դեպքում ընտանիքի անդամների) դիմումի կամ նրա անմիջական ղեկավարի զեկուցագրի հիման վրա, տվյալ մարմնի աշխատակազմի ղեկավարի կամ օրենքով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի կողմից՝ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցների առկայության դեպքում:

5. Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում պետական ծառայողների համար կարող են սահմանվել դրամական օգնության այլ դեպքեր և պայմաններ:

**Հոդված 25. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների) տրամադրվող արտոնությունները և փոխհատուցումները**

***(վերնագիրը խմբ. 11.06.14 ՀՕ-57-Ն)***

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական ծառայողների ատեստավորման, վերապատրաստման և պետական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթի ամբողջ ընթացքում պետական ծառայողի աշխատավարձը պահպանվում է:

2. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում (բացառությամբ քաղաքացիական ծառայության կադրերի երկարաժամկետ ռեզերվի) գտնվելու ժամանակահատվածում քաղաքացիական ծառայողի համար սահմանվում է աշխատավարձ՝ իր զբաղեցրած վերջին պաշտոնում ունեցած պաշտոնային դրույքաչափով, սակայն ոչ ավելի, քան բարձրագույն խմբի 1-ին ենթախմբի առավելագույն դրույքաչափը:

3. Հիմնական արձակուրդային վճարից բացի, պետական պաշտոն զբաղեցնող անձին վճարվում է լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով: Աշխատանքից ազատվելու դեպքում միանվագ արձակուրդային վճարը տրվում է փաստացի աշխատած ամիսներին համամասնորեն:

4. Հանրաքվեի, տեղական հանրաքվեի, Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանու ընտրությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում ընտրությունների անցկացման ժամանակահատվածի մեկ ամսվա համար կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, հանձնաժողովի

քարտուղարի, հանձնաժողովի անդամների, ինչպես նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի կենտրոնական ապարատի քաղաքացիական ծառայողների, քաղաքացիական և հայեցողական պաշտոն զբաղեցնողների պաշտոնային դրույքաչափերը կրկնապատկվում են: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների պաշտոնային դրույքաչափերը կրկնապատկվում են հանրաքվեի, տեղական հանրաքվեի, Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանու ընտրությունների, ինչպես նաև տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում գտնվող 5 և ավելի համայնքներում կամ 5-ից պակաս համայնքներում, որոնց ընտրողների ընդհանուր թիվը միասին գերազանցում է 10.000-ը համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի ընտրություն անցկացվելու դեպքում: Սույն մասում նշված պաշտոնային դրույքաչափերի տարբերությունը նախատեսվում է ընտրությունների կամ հանրաքվեների կազմակերպման և անցկացման ծախսերում:

5. Պետական ծառայողների առանձին ծախսերի փոխհատուցումները (կացարան, համազգեստ, տրանսպորտային միջոցներ և այլն) տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և դեպքերում:

***(25-րդ հոդվածը խմբ. 11.06.14 ՀՕ-57-Ն, խմբ. 25.05.16 ՀՕ-63-Ն, փոփ. 06.12.17 ՀՕ-245-Ն)***

**Հոդված 26. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրամադրվող սոցիալական փաթեթը**

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և (կամ) նրանց ընտանիքի անմիջական անդամներին առողջապահության ծառայությունների, հիփոթեքային վարկի ամսական վճարի մարման, ուսման վճարի, Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանգստի ապահովման նպատակով տրամադրվում է սոցիալական փաթեթ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և դեպքերում:

## Գ Լ ՈՒ Խ 8

## *ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ*

**Հոդված 27. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության կարգը**

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձը վճարվում է ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա յոթերորդ աշխատանքային օրը:

2. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց դրամական օգնության, կադրերի ռեզերվում (կադրերի տրամադրության տակ) գտնվելու, աշխատանքից ազատման, մահվան դեպքերում վարձատրության, աշխատաժամանակի հաշվարկի, արտաժամյա, գիշերային, հանգստյան, տոներին և հիշատակի օրերին կատարված աշխատանքի, պարապուրդի, ինչպես նաև ոչ լրիվ աշխատաժամանակի պայմաններում վարձատրության հետ կապված՝ սույն օրենքով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով:

3. Պետական ծառայողին Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված արձակման նպաստ չի վճարվում պաշտոնից ազատման այն դեպքերում, երբ կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածում օրենքով սահմանված կարգով նրա համար նախատեսված է վարձատրություն:

4. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն տվյալ անձի համաձայնությամբ կամ օրենքով սահմանված դեպքերում:

5. Կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածում օրենքով սահմանված դեպքում և կարգով պետական ծառայողը ստանում է վարձատրություն:

***(27-րդ հոդվածը փոփ., խմբ. 06.12.17 ՀՕ-245-Ն)***

## Հոդված 28. Պետական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող՝ պետական ծառայող չհանդիսացող անձանց վարձատրության կարգը

***(վերնագիրը լրաց. 06.12.17 ՀՕ-245-Ն)***

1. Պետական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձը (բացառությամբ քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվից պաշտոն զբաղեցնող անձի) վարձատրվում է տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխան սանդղակի առաջին մակարդակին համապատասխանող պաշտոնային դրույքաչափով:

2. Օրենքով նախատեսված դեպքում կադրերի ռեզերվից (բացառությամբ քաղաքացիական ծառայության կադրերի երկարաժամկետ ռեզերվի) պետական ծառայության ժամանակավորապես թափուր պաշտոն զբաղեցնելու դեպքում աշխատավարձի համապատասխան սանդղակում տվյալ անձի հիմնական աշխատավարձը որոշվում է իր նախորդ պաշտոնային դրույքաչափը որոշող

գործակցին հավասար (0.01 միավորի տարբերությամբ) գործակցով, իսկ դրա բացակայության դեպքում՝ առավել մոտ գործակցով:

***(28-րդ հոդվածը լրաց. 06.12.17 ՀՕ-245-Ն)***

**Հոդված 29. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության և դրամական օգնության ֆինանսավորման աղբյուրները**

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի՝ յուրաքանչյուր մարմնի համար նախատեսված միջոցներից:

2. Պետական ծառայողների միանվագ դրամական օգնության ֆինանսավորումն իրականացվում է աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների խնայողությունների հաշվին:

3. Կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցներից:

## Գ Լ ՈՒ Խ 9

## *ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ*

**Հոդված 30. Հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողների վարձատրությունը**

1. Հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի հավելված 2-ով:

2. Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող միջոցների հաշվին ծրագրեր իրականացնող գրասենյակների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման համար հիմք են ընդունվում հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր

իրականացնող պետական հիմնարկների աշխատողների՝ սույն օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափերը:

## Գ Լ ՈՒ Խ 10

## *ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ*

### Հոդված 31. Վեճերի լուծումը և պատասխանատվությունը պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին օրենսդրությունը խախտելու համար

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին օրենսդրության կիրառման հետ կապված վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին օրենսդրությունը խախտող անձինք կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

## Գ Լ ՈՒ Խ 11

## *ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

### Հոդված 32. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքի վարձատրության նոր համակարգի ներդրումը

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից պետական պաշտոն զբաղեցնող անձին նշանակվում է զբաղեցրած պաշտոնին համապատասխանող պաշտոնային դրույքաչափ:

2. Սույն օրենքով սահմանված վարձատրության նոր համակարգի ներդրումը չի կարող հանգեցնել սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին պետական պաշտոն զբաղեցնող անձի հիմնական աշխատավարձի չափի նվազեցման, բացառությամբ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո պաշտոնի փոփոխման և կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվելու դեպքերի: Ընդ որում, սույն մասով նախատեսված պայմանը զինծառայողների, քրեակատարողական ծառայողների, փրկարար ծառայողների համար կիրառելու դեպքում հիմնական աշխատավարձ է համարվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը զինծառայողներին, քրեակատարողական ծառայողներին, փրկարար ծառայողներին տրվող պաշտոնային դրույքաչափի, կոչման դրույքաչափի, ստաժի համար դրույքաչափի, պարենի փոխհատուցման գումարի, քսան օրացուցային տարվա զինվորական

ծառայության, քրեակատարողական ծառայության կամ փրկարար ծառայության ստաժ ունեցող և զինվորական ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը կամ փրկարար ծառայությունը շարունակող զինծառայողներին, քրեակատարողական ծառայողներին, փրկարար ծառայողներին տրվող ամսական հավելման հանրագումարը:

2.1. Պետական ծառայողի համար սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնի փոփոխման պայմանը չի տարածվում համապատասխան մարմնի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության կամ անվանափոխության կամ օրենքով սահմանված այլ դեպքերում արտամրցութային կարգով կամ ռոտացիայի հիման վրա հավասար կամ բարձր պաշտոնի փոխադրման (նշանակման) դեպքերի վրա: Այս դեպքերում պետական ծառայողի հիմնական աշխատավարձը որոշվում է սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին կամ 2-րդ մասով սահմանված կարգով, ընդ որում՝

1) հավասար պաշտոնի փոխադրման (նշանակման) դեպքում 2014 թվականի հուլիսի 1-ից սահմանված (պահպանված) հիմնական աշխատավարձի չափը պահպանվում է մինչև այն պահը, երբ տվյալ պետական ծառայողի համար սույն օրենքով սահմանված կարգով որոշված գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալը ավելի բարձր կլինի սույն հոդվածի համաձայն պահպանված հիմնական աշխատավարձի չափից.

2) բարձր պաշտոնի փոխադրման (նշանակման) դեպքում, եթե պետական ծառայողի հիմնական աշխատավարձը ցածր է լինում 2014 թվականի հուլիսի 1-ից սահմանված (պահպանված) հիմնական աշխատավարձի չափից, ապա սույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով որոշված հիմնական աշխատավարձի նկատմամբ պահպանվում է պետական ծառայողի՝ 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հիմնական աշխատավարձի և սույն օրենքի 32-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված կարգով որոշված հիմնական աշխատավարձի (որը պետք է ներառի նաև սույն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված բնականոն աճը) տարբերությունը մինչև այն պահը, երբ բազային աշխատավարձի փոփոխության դեպքում նրա հիմնական աշխատավարձի բարձրացված չափը կգերազանցի նաև այդ տարբերությունը: Ընդ որում, սույն հոդվածով նախատեսված կարգով պահպանված աշխատավարձի չափի տարբերությունը նվազեցվում է բազային աշխատավարձի փոփոխման և (կամ) սույն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան աշխատավարձի բնականոն աճի կիրառման դեպքում՝ հիմնական աշխատավարձի բարձրացման չափով:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված անձը վարձատրվում է իր զբաղեցրած վերջին պաշտոնում ունեցած պաշտոնային դրույքաչափով, սակայն ոչ ավելի, քան մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը բարձրագույն խմբի 1-ին ենթախմբի համար սահմանված առավելագույն դրույքաչափը:

4. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պետական պաշտոն զբաղեցնող անձի գործող պաշտոնային դրույքաչափը սույն օրենքով սահմանված՝ տվյալ պետական պաշտոնի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափից բարձր լինելու դեպքում պահպանվում է պետական պաշտոն զբաղեցնողի գործող՝ առավել բարձր պաշտոնային դրույքաչափը:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից պետական պաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի աճը կասեցվում է մինչև տվյալ պաշտոնում նրա գործող պաշտոնային դրույքաչափին հավասար պաշտոնային դրույքաչափ ստանալու իրավունք ձեռք բերելը, եթե սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին պետական պաշտոն զբաղեցնող անձի հիմնական աշխատավարձը գերազանցում է սույն օրենքով սահմանված չափերը:

6. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պետական պաշտոն զբաղեցնող անձի համար հաշվարկված լրացուցիչ աշխատավարձը պահպանվում է, եթե սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի չափը ցածր է, քան մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պետական պաշտոն զբաղեցնող անձի համար հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի չափը, և այս դեպքում լրացուցիչ աշխատավարձը հիմնական աշխատավարձի 30 տոկոսը գերազանցելիս լրացուցիչ աշխատավարձի աճը կասեցվում է: Սույն մասով սահմանված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, պետական պահպանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների լրացուցիչ աշխատավարձի աճի և մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, ինչպես նաև քրեակատարողական ծառայողների և փրկարար ծառայության ծառայողների համար սահմանված լրավճարների հետ կապված հարաբերությունների վրա: Ընդ որում, սույն մասով նախատեսված լրավճարների դեպքերը, չափերը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պետական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վերահաշվարկվում են բազային աշխատավարձի և սույն օրենքի համապատասխան հավելվածով սահմանված՝ տվյալ պաշտոնն ընդգրկող սանդղակի համապատասխան գործակցի միջոցով:

8. ***(մասն ուժը կորցրել է 29.06.16 ՀՕ-133-Ն)***

9. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դատարանում դատավորների թվի կրճատման կամ օրենքով նախատեսված՝ դատարանի կամ վճռաբեկ դատարանի պալատի վերացման դեպքում դատավորին ստորադաս դատարանի դատավորի

պաշտոնում նշանակելիս պահպանվում է նրա նախկին պաշտոնում ստացած աշխատավարձը, բացառությամբ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարանի նախագահի պաշտոնի համար ստացած հավելավճարների:

10. Աշխատավարձի բնականոն աճի հաշվարկի համար սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին տվյալ պաշտոնում պետական ծառայողի ստաժը հաշվարկվում է՝ հաշվի առնելով տվյալ պաշտոնում պետական ծառայողի աշխատանքի ողջ ժամանակահատվածը:

***(32-րդ հոդվածը խմբ. 11.06.14 ՀՕ-57-Ն, փոփ. 29.06.16 ՀՕ-133-Ն, լրաց. 06.12.17 ՀՕ-245-Ն)***

**Հոդված 33. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույթները գործում են միայն քաղաքացիական, հարկային, մաքսային, դատական ծառայողների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմերում պետական ծառայողների նկատմամբ, ընդ որում, 2014 թվականի հուլիսի 1-ից քաղաքացիական, հարկային, մաքսային, դատական ծառայողների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմերում պետական ծառայողների պարգևատրման ֆոնդը հաշվարկվում է յուրաքանչյուր մարմնում վերը նշված ծառայողների նախորդ տարվա աշխատավարձի տարեկան ֆոնդի 5 տոկոսի չափով: Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը սույն օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները գործում են միայն քաղաքացիական, դատական ծառայողների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմերում պետական ծառայողների նկատմամբ: Պետական բոլոր ծառայողների համար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, պետական պահպանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայությունների ծառայողների, սույն օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները կգործեն 2015 թվականի հունվարի 1-ից: Պետական բոլոր ծառայողների համար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական

գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների, սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույթները կգործեն 2015 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-505-Ն օրենքը, «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-409-Ն օրենքը:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, պետական պաշտոն զբաղեցնող անձանց և հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողների վարձատրությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերը ենթակա են համապատասխանեցման սույն օրենքով սահմանված դրույթներին: Մինչև այլ նորմատիվ իրավական ակտերը սույն օրենքին համապատասխանեցնելը դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքով սահմանված պահանջներին:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների և քրեակատարողական, փրկարար ծառայության ծառայողների պաշտոնների անվանումներն ու պաշտոնների նկարագրերը պետք է համապատասխանեցվեն սույն օրենքի համապատասխանաբար 4-8-րդ հավելվածներով սահմանված դասակարգմանը:

***(33-րդ հոդվածը փոփ., լրաց. 11.06.14 ՀՕ-57-Ն)***

**Հայաստանի Հանրապետության**
**Նախագահ** **Ս. Սարգսյան**

2013 թ. դեկտեմբերի 28
Երևան
ՀՕ-157-Ն

**Հավելված 1**
**«Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին»**
**Հայաստանի Հանրապետության օրենքի**

## ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

***(վերնագիրը փոփ. 11.06.14 ՀՕ-57-Ն)***

| | Պաշտոնի անվանումը | Գործակիցը |
|---|---|---|
| | 1 | 2 |
| | ՀՀ Նախագահ | 20.00 |
| | ՀՀ Ազգային ժողովի նախագահ | 18.00 |
| | ՀՀ վարչապետ | 18.00 |
| | ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ | 16.00 |
| | ՀՀ փոխվարչապետ | 15.50 |
| | ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար | 15.50 |
| | ՀՀ մարդու իրավունքների պաշտպան | 15.00 |
| | ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ | 15.00 |
| | ՀՀ վերահսկիչ պալատի նախագահ | 15.00 |
| | ՀՀ գլխավոր դատախազ | 15.00 |
| | ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ | 14.00 |
| | ՀՀ վճռաբեկ դատարանի պալատի նախագահ | 12.00 |
| | ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահ | 12.00 |
| | ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար | 12.00 |
| | ՀՀ նախարար | 12.00 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրեն | 12.00 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության պետ | 12.00 |

| | | |
|---|---|---|
| | Վարչապետին ենթակա Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ղեկավար | 12.00 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ | 12.00 |
| | ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ | 12.00 |
| | ՀՀ սահմանադրական դատարանի անդամ | 12.00 |
| | ***(փողը հանվել է 11.06.14 ՀՕ-57-Ն)*** | |
| | ՀՀ վերաքննիչ դատարանի նախագահ | 11.50 |
| | ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր | 11.50 |
| | ՀՀ վարչական դատարանի նախագահ | 11.00 |
| | ՀՀ առաջին ատյանի դատարանի նախագահ | 11.00 |
| | ՀՀ վերաքննիչ դատարանի դատավոր | 11.00 |
| | ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ | 11.00 |
| | ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ | 11.00 |
| | ՀՀ քննչական կոմիտեի նախագահ | 11.00 |
| | ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ | 10.50 |
| | ~~ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետ~~ | ~~10.00~~ |
| | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետ | 10.00 |
| | ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրեն | 10.00 |
| | ՀՀ ԱՆ դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարող | 10.00 |
| | ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր | 10.00 |
| | ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար | 12.00 |
| | ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար | 10.00 |
| | ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմնի (հանձնաժողովներ, ծառայություններ, խորհուրդներ և այլն) ղեկավար, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ | 10.00 |

| | | |
|---|---|---|
| | ՀՀ մարզպետ | 10.00 |
| | ՀՀ վերահսկիչ պալատի նախագահի տեղակալ | 10.00 |
| | ՀՀ նախարարի առաջին տեղակալ | 10.00 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավար | 10.00 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ | 10.00 |
| | Վարչապետին ենթակա Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ղեկավարի առաջին տեղակալ | 10.00 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության պետի առաջին տեղակալ | 10.00 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ | 10.00 |
| | ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ | 10.00 |
| | ՀՀ վարչական դատարանի դատավոր | 10.00 |
| | ՀՀ առաջին ատյանի դատարանի դատավոր | 10.00 |
| | ***(փողը հանվել է 11.06.14 ՀՕ-57-Ն)*** | |
| | Երևան քաղաքի դատախազ | 9.00 |
| | ՀՀ նախարարի տեղակալ | 8.50 |
| | Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտի ղեկավար | 8.50 |
| | Հատուկ հանձնարարություններով դեսպան | 8.50 |
| | ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի տեղակալ | 8.50 |
| | ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ | 8.50 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ | 8.50 |
| | Վարչապետին ենթակա Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ղեկավարի տեղակալ | 8.50 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության պետի տեղակալ | 8.50 |

| | | |
|---|---|---|
| | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ | 8.50 |
| | ՀՀ ՋՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ | 8.50 |
| | ~~ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի առաջին տեղակալ~~ | ~~8.50~~ |
| | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալ | 8.50 |
| | ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի անդամ | 8.50 |
| | ***(փողը հանվել է 11.06.14 ՀՕ-57-Ն)*** | |
| | ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմնի (հանձնաժողովներ, ծառայություններ, խորհուրդներ և այլն) ղեկավարի տեղակալ, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահի տեղակալ | 8.00 |
| | ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար | 8.00 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավարի առաջին տեղակալ | 8.00 |
| | ՀՀ մարզպետի տեղակալ | 8.00 |
| | ~~ՀՀ Ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի տեղակալ~~ | ~~7.50~~ |
| | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի տեղակալ | 7.50 |
| | ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալ | 7.50 |
| | ՀՀ ԱՆ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ | 7.50 |
| | ՀՀ մարզի դատախազ | 8.00 |
| | Կայազորի զինվորական դատախազ | 8.00 |
| | ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմնի (հանձնաժողովներ, ծառայություններ, խորհուրդներ և այլն) անդամ, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ | 7.50 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավարի տեղակալ | 7.50 |
| | **ՀՀ Նախագահի աշխատակազմ** | |
| | ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական | 11.00 |

| | | |
|---|---|---|
| | ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավար | 10.50 |
| | ՀՀ Նախագահի խորհրդական | 10.50 |
| | ՀՀ Նախագահի գլխավոր ռազմական տեսուչ | 10.50 |
| | ***(փողը հանվել է 11.06.14 ՀՕ-57-Ն)*** | |
| | ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ | 10.00 |
| | ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ | 9.50 |
| | ՀՀ Նախագահի մամուլի քարտուղար | 9.00 |
| | ՀՀ Նախագահի օգնական | 9.00 |
| | ՀՀ Նախագահի գլխավոր ռազմական տեսուչի առաջին տեղակալ | 8.50 |
| | ՀՀ Նախագահի գլխավոր ռազմական տեսուչի տեղակալ | 7.50 |
| | **ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ** | |
| | ՀՀ Ազգային ժողովի նախագահի գլխավոր խորհրդական | 10.00 |
| | ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական | 9.50 |
| | ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ | 10.00 |
| | ՀՀ Ազգային ժողովի նախագահի օգնական | 8.00 |
| | ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալ | 8.50 |
| | ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի հայեցողական տեղակալ | 8.00 |
| | **ՀՀ կառավարության աշխատակազմ** | |
| | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար | 12.00 |
| | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ | 10.00 |
| | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ | 8.50 |
| | ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական | 10.00 |
| | ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավար | 9.50 |
| | ՀՀ վարչապետի խորհրդական | 9.50 |
| | ՀՀ վարչապետի ավագ օգնական | 8.50 |

| | | |
|---|---|---|
| | ՀՀ վարչապետի օգնական | 8.00 |

***(հավելվածը փոփ., լրաց. 11.06.14 ՀՕ-57-Ն, փոփ. 24.11.15 ՀՕ-145-Ն, լրաց. 19.10.16 ՀՕ-168-Ն, 16.12.16 ՀՕ-6-Ն, փոփ., խմբ. 31.05.17 ՀՕ-84-Ն)***

***(հավելվածը 09.06.17*** *Error! Hyperlink reference not valid.* ***օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հոդվածների փոփոխություններով և լրացումներով ուժի մեջ կմտնի 10.04.2018թ.)***

***(հավելվածը 16.01.18*** *Error! Hyperlink reference not valid.* ***օրենքի 1-ին հոդվածի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը)***

***(հավելվածը 17.01.18*** *Error! Hyperlink reference not valid.* ***օրենքի 2-րդ հոդվածի փոփոխություններով ուժի մեջ կմտնի նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:)***

**Հավելված 6**
**«Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին»**
**Հայաստանի Հանրապետության օրենքի**

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ~~ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ